ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ **Սովորողի բարոյահոգեբանական վիճակի բարելավումը «Շարային պատրաստություն, դարձումներ տեղում» դասաժամերին**

Հետազոտող ուսուցիչ՝ **Միխայել Ծատրյան**

«Վարդանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Մենթոր ուսուցիչ՝ ՎԱՐԴԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՄԵՂՐԻ-2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն…….....էջ3

2.Սովորողի բարոյահոգեբանական վիճակի
բարելավումը «Շարային պատրաստություն, դարձումներ տեղում» դասաժամերին

- Շարային պատրաստություն.դասավանդման մեթոդիկա.....էջ6
- Նախնական և կատարողական հրամաններ.....էջ12
- Զինվորի պարտականությունները շարք կանգնելուց առաջ և շարքում…....էջ13

3. Շարային վարժաձևերի կատարմանը բնորոշ սխալները…….……էջ21

4.Եզրակացություն…….……էջ24

5.Գրականության ցանկ…….……էջ25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Խնդիր- Կարո՞ղ է արդյոք «Շարային պատրաստության» ուսուցումը ազդել սովորողի բարոյահոգեբանական նկարագրի վրա, մոտիվացնել նրան, դաստիարակել պատանուն որպես կարգապահ, պարտաճանաչ, ուշադիր մարդու։

Վարկած- «Շարային պատրաստությունը» նպաստում է ուշադրության, դիտողականության, կատարողականության և կոլեկտիվիզմի զարգացմանը։ Արագ զարգանում են պատանիների գործնական հմտությունները, ինչն էլ նպաստում է ինքնագնահատականի բարձրացմանը։ Հայտնի փաստ է, որ արագ հաջողությունները օգնում են մոտիվացնել աշակերտներին։

Առաջին հայացքից «Շարային պատրաստություն» թեմայի ուսուցումը կարող է թվալ միօրինակ։ Թեմայի վերաբերյալ տեսական հարուստ և բազմազան նյութ գտնելը դժվար է անգամ տեխնոլոգիապես հարուստ մեր ժամանակներում։ Բայց գիտակցելով թեմայի կարևորությունը և տարիներ շարունակ հետևելով աշակերտների վարքին ու վերաբերմունքին՝ սկսեցի մտածել այն մասին, թե նյութի մատուցումը, գործնական հմտությունների ամրապնդումը ինչ առանձնահատկություններ ունի, ինչպես է թեման նպաստում 14-16 տարեկանների հոգեբանության վրա, ինչ դրական ազդեցություն կարող է ունենալ։ Ներքին բնազդով զգալով սովորողի կրթական կարիքները՝ կարող ենք այս կամ այն կերպ լրացնել դրանք, սակայն գիտակցված, նպատակաուղղված ու փորձարկված միջոցների կիրառումը կտա ավելի շոշափելի արդյունք։ Ուստի որոշեցի կողք կողքի դնել թեմային առնչվող բոլոր դրական, նպաստավոր փաստերը և վերագնահատել իմ կատարած աշխատանքները դպրոցում։

ՌԴ սահմանապահ զորքերում ծառայել եմ 18 տարի, իսկ դպրոցում որպես զինղեկ աշխատում եմ գրեթե 6 տարի։ Սա աշակերտներին արագ և բազմակողմանի ճանաչելու հնարավորություն է տալիս։ Դա էապես նպաստում է, որ ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները ճիշտ կառուցվեն։ Նրանց հետ շփվելու և մտերմանալու հնարավորություններ են ստեղծվում նաև արտադպրոցական միջավայրում, օրինակ՝ այգեգործական աշխատանքներ կազմակերպելիս։ Այստեղ հնարավորություն կա շփվելու որպես խորհրդատու, ավագ ընկեր, օգնական։

Ուզում եմ նշել, որ ՆԶՊ-ի դասավանդումը սկսելով 8-րդ դասարանից, զինղեկը գործ ունի դեռահասների հետ։ Գաղտնիք չէ, որ նրանց հետ կատարված ֆիզիոլոգիական փոփոխությունները կարող են այնքան ազդել նրանց վրա, որ նրանք դառնան անճանաչելի։ Նախկին հեղինակությունները դադարում են այդպիսին լինել։ Պետք է ձգտել դառնալ հեղինակություն աշակերտների համար, ուղղորդել ճիշտ ճանապարհով։ Նոր որոնումների, ինքնափնտրտուքի շրջան է։ Հենց այս տարիքից էլ սկսած տղաների մոտ

նկատվում է անտարբերություն ուսման նկատմամբ: Զարգանում են նոր հետաքրքրություններ:

Ի՞նչ անել, որ դեռահասի մոտ զարգանա մոտիվացիա: Պետք է հնարավորինս բացառել ապամոտիվացնող գործոնները՝ նպաստելով մոտիվացնող գործոնների խթանմանը:

«Շարային պատրաստություն» կազմակերպվում է գործնական պարապմունքներով: Սա ևս նպաստավոր գործոն եմ դիտում, քանի որ աշակերտները սիրում են գործնական պարապմունքները: Այն նաև լիցքաթափող դեր ունի մյուս դասաժամերից հետո աշակերտները կարողանում են շարժվել, մաքուր օդ շնչել, շտկել կեցվածքը՝ բարելավելով իրենց ֆիզիկական վիճակը:

Մոտիվացնող գործոններ	Ապամոտիվացնող գործոններ
✓ Հաջողություն ✓ Նպատակ ✓ Հաճույք ✓ Խրախուսում ✓ Թիրախներ	❖ Զախողումներ ❖ Դեպրեսիա ❖ Անհանգստություն ❖ Միջավայրի գործոն՝ցուրտ, աղմուկ… ❖ Ֆիզիոլոգիական գործոն՝ քաղց, ցավ , հոգնածություն….

Մեկ այլ հանգամանք ևս, թեմայի արդյունավետ ուսուցում անհնար է կազմակերպել առանց «օգնականների»՝ ջոկերի հրամանատարների: Սա հնարավորություն է տալիս դեռահասին **նոր դեր** ստանձնել, դառնալ հրամանատար, օգնել դիմացինին՝ միևնույն ժամանակ շահելով զինղեկի վստահությունն ու համակրանքը:

Հարկ է նշել նաև, որ դասընթացում կարող են հաջողություններ գրանցել այն աշակերտներն անգամ, ովքեր առանձնապես աչքի չեն ընկել ուսումնական հաջողություններով: Մի կարևոր հանգամանք ևս այս դասաժամերին կարող են շեշտադրվել աշակերտների ֆիզիկական տվյալները: Սլացիկ հասակը, ուղիղ կեցվածքը, կոկիկությունը ներկայացնելու և դիմացիններին դուր գալու լավագույն հնարավորություն կարող են դառնալ «Շարային պատրաստության» դասաժամերը:

Քանի որ յուրաքանչյուր զինծառայող զինվորական ծառայության առաջին իսկ օրվանից առնչվում է շարային կեցվածքին, իսկ հետագայում՝ ողջ ծառայության ընթացքում այն ուղեկցում է իրեն, ապա հարկ է, որ յուրաքանչյուր աշակերտ գիտակցի թեմայի

կարևորությունը և ջանքեր գործադրի անհրաժեշտ գիտելիքների և կարողությունների ամրապնդման համար։

Սակայն ամենակարևորը մեր վերաբերմունքն ու մոտեցումն է։ Վերջին հաշվով ինչ ռազմավարություն կկիրառենք մենք, բոլոր դեպքերում գլխավորը սովորողին հասցնելն է այն միտքը, որ ուսումնառության ընթացքում հաջողության հասնելը ոչ թե կարողությունների, այլ ժամանակի և ջանքերի խնդիր է։

Գրականության ակնարկ

Սկսեցի որոնել,կարդալ, ունկդրել տարաբնույթ նյութեր՝ ուսումնասիրվող հարցի մասին գիտելիքներս հարստացնելու և հետագա անելիքներս որոշելու համար։ Դրանք ամփոփ կփորձեմ ներկայացնել ստորև։

Նախ անդրադառնանք այն հարցին, թե ինչ կապ կա շարային պատրաստության և ճիշտ կեցվածքի միջև։

Վերջին ժամանակներում կատարված հետազոտությունները վկայում են այն մասին, որ ներկա ժամանակաշրջանում աճում է կեցվածքի հենաշարժիչ ապարատի շեղումներ ունեցող սովորողների թիվը։ Հետևաբար ժամանակի հրամայականն է՝ սովորողներին գիտելիքներ հաղորդել ճիշտ կեցվածքի վերաբերյալ, այդ հարցում ֆիզիկական վարժությունների ունեցած նշանակության մասին։ Կեցվածքը բնածին չի լինում. այն ձևավորվում է երեխայի աճի և զարգացման ընթացքում։ Ճիշտ կեցվածք ընդունված է համարել մարմնի սովորական դրությունը ողնասյան բնական կորություններով, գլխի, իրանի, կրծքավանդակի, ուսերի, թիակների, կոնքի ճիշտ դիրքով։ Կեցվածքի շեղումների պատճառները բազմաթիվ են, օրինակ՝ քայլելիս մեջքը կռացնելը, պայուսակը և այլ ծանրություններ միևնույն ձեռքով տանելը, նստարանին սխալ նստելը, բարձր խոսելը և այլն։ Սովորողները պետք է գիտենան, որ կեցվածքի խախտումները ուղեկցվում են հոգնածությամբ, ընդհանուր ինքնազգացողության վատացմամբ։ Այն բացասաբար է ազդում առողջության վրա, պատճառ դառնում հիվանդությունների առաջացմանը։ Հասկանալի է, որ ողնաշարի ծռումները, կրծքավանդակի ձևի փոփոխությունները անբարենպաստ պայմաններ են ստեղծում սրտի և թոքերի աշխատանքի համար։ Կեցվածքը կարելի է բնորոշել որպես արտաքին կերպարանք, բարեկրթության ձև։ Գեղեցիկ ճիշտ կեցվածքը մշակվում է հատուկ վարժությունների միջոցով։ Ճիշտ կեցվածք ձևավորելու համար պետք է մարզել այն մկանախմբերը, որոնք մարմինը պահում են ճիշտ դիրքում։ Իսկ այսպիսի դիրքը պահպանելու համար հարկավոր է մարզել ամբողջ կմախքի մկանները, հատկապես որովայնի և մեջքի մկանները։ Հետևաբար, իմանալով կեցվածքի շեղումների պատճառները, ոչ միայն պետք է խուսափել դրանցից, այլև կատարել ճիշտ կեցվածքը ձևավորող վարժություններ։

Սովորողի բարոյահոգեբանական վիճակի բարելավումը «Շարային պատրաստություն, դարձումներ տեղում» դասաժամերին

1. ՇԱՐԱՅԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ. ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Ուսուցման բոլոր ձևերից միայն շարքն է սովորողների մեջ դաստիարակում հրամանատարի կամքի արագ ու ճշգրիտ կատարումը: Շարքը կոփում է մարդու կամքը, կատարելագործում իր մարմնին տիրապետելու ունակությունը, զարգացնում նրա ուշադրությունը, հնարամտությունը և համախմբվածությունը: Շարքում գտնվելու փաստը արդեն իսկ սովորողին վարժեցնում է լինել կարգապահ և կազմակերպված, իսկ շարային հրամանների կատարումը նրան դաստիարակում է հրամանատարին հնազանդության ոգով:

Շարքից է սկսվում ապագա մարտիկը:

Շարային պատրաստության յուրաքանչյուր պարապմունք աշակերտների շարային վարժվածության բարձրացման գործում մի նոր աստիճան է: Ստացված գիտելիքների

խորությունն ու հմտությունների ամրությունը մեծ մասամբ պայմանավորված են զինղեկի կողմից ուսուցման մեթոդների ճիշտ ընտրությամբ։

Ուսուցման մեջ մեթոդների ճիշտ ընտրությունը թույլ է տալիս պարապմունքը դարձնել առավել արդյունավետ և հետաքրքիր: Ուստի զինղեկը պարտավոր է լավ իմանալ ոչ միայն ինչ սովորեցնել, այլև ինչպես սովորեցնել, ինչպիսի ուղիներով և միջոցներով հասնել ուսուցման ծրագրի գիտակից և հաստատուն յուրացմանը:

Շարային պատրաստության յուրաքանչյուր պարապմունքի ընթացքում զինղեկը աշակերտների վրա ազդում է **խոսքով, օրինակով, ցուցադրումով և գործելակերպով**: Աշակերտները այդ ընթացքում **ընկալում են, մտածում և հիշում** ուսումնական նյութը, ձեռք բերում գործնական հմտություններ:

Պարապմունքի անցկացման նախապատրաստական փուլում զինղեկի առջև կանգնած է հետևյալ խնդիրը՝ ընտրել պարապմուքի անցկացման այնպիսի մեթոդ (մեթոդներ), որպեսզի ինքը և իր աշակերտները մտավոր և ֆիզիկական էներգիայի լավագույն ծախսով կարողանան արագորեն յուրացնել ուսումնական նյութը։ Իսկ դրա կարեւորագույն բաղկացուցիչներից մեկն էլ պարապմուքներին դասակների և ջոկերի հրամանատարների պարտադիր ներգրավումն է։ Նրանց հետ զինղեկը մշտապես անց է կացնում հրահանգավորումներ: Առանց այդ օգնականների վրա հենվելու՝ զինղեկի համար շատ դժվար կլինի արդյունավետ անցկացնել պարապմուքը, քանի որ մեկ մարդու համար քսան և ավելի աշակերտների, մեկ դասաժամի ընթացքում, գործնականորեն ինչ-որ բան սովորեցնելը անհնար է։

Շարային պատրաստությունը դաստիարակչական ազդեցություն է գործում ոչ միայն իր դրվածքով, այլև իր բոլոր բաղկացուցիչ մասերով՝ անցկացման մեթոդով, ուսուցման միջոցներով, կազմակերպման մակարդակով, աշակերտական կոլեկտիվի ակտիվությամբ, զինղեկի կերպարով և այլն:

Ռազմագիտության դասընթացն ավարտելուց հետո աշակերտները հոգեբանորեն պետք է պատրաստ լինեն կյանքի նոր պայմաններին՝ զինվորական ծառայությանը։

Շարային պատրաստությունը աշակերտների դաստիարակության և զինվորական ծառայությանը նախապատրաստման ողնաշարն է: Զինվոր դառնալը սկսվում է շարքից:

Նախնական զինվորական պատրաստության դասաժամը ներառելով իր մեջ հանրահայտ դասական դասի բոլոր բաղադրյալները՝ ունի մի շարք՝ միայն իրեն հատուկ առանձնահատկություններ:

Այդ առանձնահատկություններն են.

- դպրոցի տնօրենի հրամանով ՆԶՊ պարապմունքների ժամանակ դասարանը վերանվանվում է դասակ և բաժանվում 2-3 ջոկերի
- տնօրենի հրամանով նշանակվում են դասակների և ջոկերի հրամանատարներ
- պարապմունքը սկսվում է աշակերտների շարումով, զինղեկին դասակի հրամանատարի զեկուցումով՝ դասակը պատրաստ լինելու վերաբերյալ, և աշակերտների համազգեստի ու արտաքին տեսքի ստուգումով
- ՆԶՊ կաբինետում աշակերտների տեղավորումն ըստ ջոկերի՝նշելով հրամանատարների տեղերը պարապմունքների ընթացքում թե՛ կաբինետում և թե՛ շարքում
- աշակերտների վարվելաձեւը՝ համաձայն ՀՀ համազորային կանոնադրությունների պահանջների և նյութատեխնիկական բազայով ապահովման կարգը, դասը սկսելու եւ ավարտելու կարգը:

Այս կազմակերպչական մասն արդեն խոսում է այն մասին, որ նախնական զինվորական պատրաստության **բոլոր պարապմունքները և միջոցառումները սկսվում են շարքից:**

Շարային պատրաստությունը անց է կացվում գործնական պարապմունքների մեթոդով և ուսումնասիրված հնարքների (գործողությունների) բազմակի կրկնությամբ: Ընդ որում անհատական ուսուցման հիմքում ընկած է զինղեկի կողմից շարային հնարքների անձնական օրինակելի ցուցադրումը և աշակերտների կողմից դրանց ճշգրիտ կատարումը, որոնք զուգակցվում են մշտապես կրկնվող վարժանքներով:

Շարային հնարքի և գործողության օրինակելի ցուցադրումը ուսուցման կարևորագույն հնարք է: Ուսուցման և դաստիարակության **«Կատարիր, ինչպես ես»** սկզբունքը իր առանձնահատուկ կիրառումն է գտնում շարային պատրաստության պարապմունքների ժամանակ:

Ցուցադրված հնարքը (գործողությունը) պետք է լինի ճշգրիտ, անթերի եւ շարային կանոնադրությանը խիստ համապատասխան: Այդ պատճառով էլ զինղեկը պետք է մանրակրկիտ ձևով նախապատրաստվի դասի (պարապմունքի) ժամանակ հնարքի ցուցադրմանը: Աշակերտները չեն կարող ճիշտ կատարել սխալ կամ վատ ցուցադրված հնարքը եւ անխուսափելիորեն կկրկնեն նույն սխալները:

Զինղեկը պետք է մշտապես հիշի, որ ուսուցման հիմքերը լավագույնս դրվում են առաջին իսկ օրերից: Հենց այդ ժամանակ էլ ձևավորվում է շարային հնարքների կամ գործողությունների ուսումնասիրման հաստատուն կարգ, որը հետագայում վեր է ածվում սովորության:

Յուրաքանչյուր պարապմունք պետք է անցկացվի աշակերտների արդյունքների **համեմատության եւ մրցակցության ֆոնի վրա**: Դա անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում ուսումնասիրված նյութի արագ յուրացման համար: Շարային պատրաստության

պարապմունքը կհասնի իր նպատակին այն դեպքում, երբ այն մանրակրկիտ նախաապատրաստված եւ նյութապես ապահովված է: Ահա թե ինչու զինղեկը (նախքան վարմունքը սկսումը պետք է անցկացնի դասակների եւ ջոկերի հրամանատարների օրակարգավորում եւ մտահոգվի պարապմունքի նյութական ապահովման մասին:

Շարային հնարքների ուսուցումը պետք է անցկացնել հետևյալ հերթականությամբ՝

1. հնարքի ծանոթացում,

2. հնարքի ուսուցում,

3. վարժանք:

1. Հնարքին ծանոթացնելու համար զինղեկը պարտավոր է՝

ա. անվանել հնարքը կամ գործողությունը, բացատրել՝ որտե՞ղ և ի՞նչ նպատակով է այն օգտագործվում,

բ. տալ հրամանը, որով կատարվում է հնարքը (գործողությունը).

գ. խստորեն՝ ըստ շարային կանոնադրության, ցույց տալ՝ ինչպես է կատարվում հնարքը ամբողջովին, ապա դանդաղ կարգով (տեմպով), շատ մասերի՝ կարճ բացատրելով յուրաքանչյուր շարժման կատարման կարգը:

Հնարքին ծանոթացնելու համար պետք է ծախսվի նվազագույն ժամանակ: Շարքային հնարքի բարդության աստիճանից ելնելով , ուսուցումը կարող է անցկացվել՝

ա. ամբողջությամբ, եթե բարդ չէ.

բ. ըստ մասերի, եթե բարդ է.

գ. նախապատրաստական վարժությունների օգնությամբ, եթե հնարքը բարդ է, և նրա առանձին մասերը դժվար են ընկալվում:

Հստակ, ճիշտ և գեղեցիկ ցուցադրված հնարքները և գործողությունները մեծ տպավորություն են թողնում սովորողների վրա և ցանկություն առաջացնում կատարել դրանք այնպես, ինչպես ցուցադրված էր:

Բացատրությունը մատչելի է դարձնում ուսուցանվող շարային հնարքի (գործողության) այնպիսի կողմերը, որոնք դժվար են յուրացվում ցուցադրման ժամանակ: Այն կողմնորոշում է սովորողներին, թե ինչ պետք է ցուցադրվի, կամ՝ ինչից է կախված շարային հնարքի (գործողության) կատարման ճշտությունը:

2. Շարային հնարքին (գործողությանը) ծանոթանալուց հետո, որոնց ամբողջական գործողության կատարման հմտության ձևավորման գործընթաց, ներկայացվում են երեք կապակցված հիմնական փուլեր:

ա. տարրերով եւ կատարմամբ բարդ հնարքը (գործողությունը) մասնատվում է.

բ. տարրերը հերթականությամբ միավորվում են ըստ խմբերի՝ ապա՝ մեկ ամբողջության,

գ.հնարքի կամ գործողության կատարման մեջ վարժվածության ձեռք բերում:

Պետք է հասնել այն բանին, որ բոլոր հնարքները կատարվեն անսխալ, գեղեցիկ եւ հստակ:

3. Վարժանքը անցկացվում է հրամանատարի (զինղեկի) հրամանով՝ սկզբքից դանդաղ, ապա սովորական կարգով (տեմպով)՝ զույգերով կամ անհատական:

Սովորողների կողմից թույլ տված սխալները պետք է ուղղվեն վարժանքին զուգընթացաբար:

Թեման, պարապմունքի նպատակները և ուսումնական հարցերը հայտարարելուց հետո զինղեկը յուրաքանչյուր ջոկին ցույց է տալիս պարապմունքի տեղը և դասակի հրամանատարին հրամայում ջոկերը տանել՝ ըստ տեղերի:

Երբ բոլոր ջոկերը տեղերում են, զինղեկը հրամայում է. **«Ուսումնական հարցերի վարժանքներին ԱՆՑՆԵԼ»:** Այս կամ այն ուսումնական հարցի ուսումնասիրմանը հատկացված պլանային ժամանակի լրանալուն պես զինղեկը դասակի հրամանատարին՝ կարգադրում է տալ հրաման՝ **«Ջոկերի հրամանատարներ, անցնել հաջորդ ուսումնական հարցի ուսումնասիրմանը»:** Այդ հրամանը ստանալուց հետո ջոկի հրամանատարը դուրս գալով շարքի կենտրոն՝ կարող է պարապմունքը սկսել նախկինում ուսումնասիրված հնարքների կրկնությամբ, իսկ հետո նոր միայն անցնել նոր հնարքի ուսումնասիրմանը եւ դրա վարժանքներին: Ընդ որում՝ նոր հնարքի ուսումնասիրումը (ուսուցումը) սկսվում է նախ՝ ամբողջությամբ, իսկ հետո՝ դրա բաղկացուցիչ տարրերի դանդաղեցված և սովորական արագությամբ ցուցադրումով:

Զույգերով վարժանքների անցկացման ժամանակ նրանցից յուրաքանչյուրը հաջորդականորեն հանդես է գալիս հրամանատարի դերում: Ջոկի հրամանատարը վերահսկում է աշակերտների գործողությունները և օգնություն ցուցաբերում նրանց ուսուցման ու թույլ տրված սխալների վերացման ուղղությամբ:

Զինղեկը և դասակի հրամանատարը, անցնելով մի ջոկից մյուսը, վերահսկում են ամբողջ պարապմունքի ընթացքը, ջոկերի հրամանատարներին տալիս ցուցումներ՝ աշակերտների կողմից թույլ տրված սխալների և թերությունների վերացման նպատակով:

Պարապմունքի անցկացման ժամանակ զինղեկը և նրա օգնականները պարտավոր են հրամանները տալ բարձր, հրամանատարական ձայնով՝ պարզ և հստակ արտասանելով յուրաքանչյուր բառ:

2. ՆԱԽՆԱԿԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀՐԱՄԱՆՆԵՐ

Հրամանները բաժանվում են երկու մասի նախնական և կատարողական: Նախնական հրամանը տրվում է հստակորեն, բարձրաձայն, ձգելով, որպեսզի շարքում կանգնածները հասկանան, թե հրամանատարի ինչ գործողություններ է պահանջում իրենցից: Կատարողական հրամանը տրվում է ոչ մեծ դադարից հետո, բարձրաձայն, հատ-հատ և հստակ: Կատարողական հրամանի արձակումը պետք չէ ձգել, քանի որ դա սովորողի մեջ ստեղծում է ավելորդ լարվածություն և հանգեցնում գործողությունների անճշտության: Տալով հրամաններ՝ զինղեկը եւ իր օգնականները պարտավոր են զգաստ դիրք ընդունել: Դա աշակերտների մեջ դաստիարակում է կարգապահություն եւ շարքի նկատմամբ հարգանք:

«Անցնում ենք պարապմունքի երկրորդ ուսումնական հարցի մշակմանը», ասում է զինղեկը, նշում այդ հարցի անվանումը եւ բացատրում, որ շարքերը ղեկավարվում են հրամաններով ու կարգադրություններով, որոնք տրվում են ձայնով, ազդանշաններով, անձնական օրինակով կամ փոխանցվում կապի միջոցներով: Հրամանը ձայնով տալու դեպքում այն բաժանում են նախնական հրամանի եւ կատարողականի: Կարող են լինել նաև միայն կատարողական հրամաններ: Նախնական հրամանով շարքում կամ դրանից դուրս գտնվող զինծառայողներն ընդունում են զգաստ դիրք, իսկ շարժման ընթացքում ոտքը ուժգնորեն դնում են գետնին: Այդ հրամանը տրվում է հստակ, բարձր եւ երկարաձիգ ձայնով, որպեսզի մարդիկ հասկանան տրվող հրամանով գործելու բնույթը: Զինծառայողի կամ ստորաբաժանման ուշադրությունը գրավելու համար, անհրաժեշտության դեպքում նախնական հրամանում նշվում է ստորաբաժանման անվանումը - զինծառայողի կոչումն ու ազգանունը: Օրինակ՝ «Երկրորդ դասակ կանգ ԱՌ», կամ «Շարքային Պողոսյան, կանգ ԱՌ»:

Կատարողական հրամանը տրվում է որոշ դադարից հետո՝ բարձրաձայն, հատ-հատ եւ հստակ: Կատարողական հրամանին հաջորդում է դրա անհապաղ և ճշգրիտ կատարումը: Հրամանը չեղյալ հայտարաղելու կամ գործողության դադարեցման համար տրվում է՝ «ԹՈՂՆԵԼ» հրամանը: Այդ հրամանով ընդունվում է այն դիրքը, որը եղել է մինչ այդ:

Բացատրությունից հետո զինղեկը հրաման է տալիս ջոկերի հրամանատարներին՝ ջոկերը տանել նշված տեղերը եւ անցնել հրամանների կատարման մարզումներին:

Զինղեկը եւ դասակի հրամանատարը ուշադրությամբ հետեւում են ջոկերի հրամանատարների եւ աշակերտների գործողություններին եւ նրանց կողմից տրվող՝ «Ջոկ, միատողան ՇԱՐՎԻՐ», «Ջոկ, երկտողան ՇԱՐՎԻՐ», «Ջոկ, ՑՐՎԻՐ», «Ջոկ, ՀԱՎՍԱՐ», «Ջոկ, աջ ԴԱՐՁ» եւ այլ հրամանների կատարմանը, անհրաժեշտության դեպքում միջամտում և կատարում են ուղղումներ:

3. ԶԻՆՎՈՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՐՔ ԿԱՆԳՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ ԵՎ ՇԱՐՔՈՒՄ

Անցնելով տվյալ ուսումնական հարցին՝ զինղեկը դասակը շարում է երկտողան: Դրա համար նա հրամայում է դասակի հրամանատարին, «Դասակի հրամանատար, շարեք դասակը երկտողան»: Դասակի հրամանատարը պատասխանելով՝ «ԼՍՈՒՄ ԵՍ», կատարում է հրամանը և զեկուցում զինղեկին հրամանի կատարման մասին:

Ներածական պարապմունքի ժամանակ զինղեկը աշակերտներին տնային հանձնարարություն էր տվել ծանոթանալ զինվորի պարտականություններին շարք կանգնելուց առաջ եւ շարքում: Այժմ նա հարցեր է ուղղում աշակերտներին և ստուգում, թե ինչպես են նրանք յուրացրել: Օրինակ՝ զինվորը շարք կանգնելուց առաջ ի՞նչ է պարտավոր սուուգել, կամ զինվորի պարտականությունները շարքում, ի՞նչ չի թույլատրվում շարքում և այլն:

Քանի որ աշակերտները առաջին դասարանից ծանոթ են՝ ՀԱՎՍԱՐ, ԶԳԱՍՏ, ԱԶԱՏ, ՑՐՎԻՐ հրամաններին, ապա ուսումնասիրվող նյութի գործնական ամրապնդման համար զինղեկը դասակի հրամանատարին հրահանգ է տալիս՝ ջոկերի պարապմունքի նշված վայրերը տանելու և շարք կանգնելուց առաջ ու շարքում զինվորի պարտականությունների գործնական մշակմանը անցնելու վերաբերյալ:

Յուրաքանչյուր ջոկի հրամանատար շարք կանգնելու, շարելու և այլ հրամանների արձակման և դրանց կատարման ստուգման միջոցով հասնում է աշակերտների կողմից ուսումնական հարցի յուրացմանը:

Զինղեկը դասակի հրամանատարի հետ միասին ուշադրությամբ հետևում է ջոկերում պարապմունքի ընթացքին և անհրաժեշտության դեպքում տակտով օգնում ջոկերի հրամանատարներին՝ վերացնելու աշակերտների կողմից թույլ տրված սխալներն ու շնչյունները:

Շարային կեցվածք: Անցնելով ուսումնական հարցի ուսուցմանը՝ զինղեկը օրինակելի ցուցադրումով աշակերտներին ծանոթացնում է շարային կեցվածքին և դրա բաղկացուցիչ մասերին: Նա բացատրում է, թե որ դեպքերում են ընդունում շարային կեցվածք, առանձնահատուկ ուշադրություն է դարձնում կարգադրություններ տալիս կամ կարգադրություններ ստանալիս շարային կեցվածքի ընդունման ճշտության վրա: Այնուհետեւ դասակի հրամանատարի հրահանգով ջոկերի հրամանատարները ջոկերը տանում են իրենց հատկացված տեղերը եւ անցնում շարային կեցվածքի ուսուցմանը: Ջոկի հրամանատարը ջոկը շարում է մեկ տողանով, ինքը կանգնում շարքի կենտրոնում՝ 3-4 քայլ հեռավորության վրա, որպեսզի աշակերտներին դիտելի լինի հրամանատարի ցուցադրումը թե՛ առջևից և թե՛ կողքից: Անձնական ցուցադրումից հետո նա աշակերտներին հնարավորություն է տալիս ինքնուրույն ընդունել շարային կեցվածք, իսկ ինքը ստուգում է յուրաքանչյուր աշակերտի շարային կեցվածքը, ուղղում թույլ տրված

սխալները: Այնուհետեւ ջոկի հրամանատարը անցնում է շարային կեցվածքի առանձին բաղկացուցիչ մասերի ուսուցմանը: Եթե սովորողների մեծամասնությունը սխալներ է թույլ տալիս, ապա ջոկի հրամանատարը նախապատրաստական վարժությունների օգնությամբ անցնում է հնարքի գործնական ուսուցմանը: Այդ նպատակով սովորողները շարքում կանգնում են շարային հրապարակում նշված ուղղանկյուն գծի վրա՝ դիպչելով գծին կոշիկի ծայրերով:



Ջոկի հրամանատարը ցույց է տալիս առաջին նախապատրաստական վարժությունը՝ ճակատի գծով ոտնաթաթերի քթերի հեռացումը ոտնաթաթի լայնությամբ: Հետևելով ոտքերի թաթերի դիրքին՝ թույլ է տալիս 2-3 րոպե կատարել նախապատրաստական վարժությունը ինքնուրույն, ապա անցնում է վարժեցման:

Այս նախապատրաստական վարժությունը կատարվում է հետեւյալ հրամանով՝ «Ոտնաթաթերի ծայրերը միացնել, կատարիր՝ մեկ, ոտնաթաթերի ծայրերը բացել, կատարիր՝ երկու. ոտնաթաթերի ծայրերը միացնել, կատարիր՝ մեկ», եւ այլն: Ընդ որում՝ վարժությունը կատարելիս կոշիկի ծայրերին նայել արգելվում է:

Հրամաններ արձակելիս ջոկի հրամանատարը հետեւում է ոտնաթաթերի ծայրերի բացման լայնքին եւ զուգընթաց ուղղում սովորողների կողմից թույլ տրված սխալները: Սկզբում յուրաքանչյուր սովորող վարժությունը կատարում է մի քանի անգամ, որից հետո տրվում է ինքնուրույն վարժման հրամանը: Վարժությունը պետք է կատարել 5-7 անգամ եւ միայն դրանից հետո ստուգել՝ չե՞ն շեղվել, արդյոք, ոտնաթաթի ծայրերը: Ինքնուրույն վարժման ժամանակ ջոկի եւ դասակի հրամանատարները, ինչպես նաեւ զինղեկը հաջորդաբար ստուգում են յուրաքանչյուր սովորողին եւ ուղղում սխալները:

Անհատական վարժումից հետո պարապմունքի ղեկավարի թույլտվությամբ դասակի հրամանատարը հրամայում է. «Ջոկերի հրամանատարներ, անցնել զույգերով վարժումներին»: Ջոկերի հրամանատարները բաժանում են ջոկերը զույգերի եւ հրամայում են՝ անցնել զույգերով վարժությունների, , հետևում են եւ ուղղում թույլ տրված սխալները:

Ապա ջոկի հրամանատարը ցույց է տալիս երկրորդ նախապատրաստական վարժությունը՝ կրծքավանդակի բարձրացում՝ իրանի թեթևակի առաջ մղումով, փորի ներսքաշումով, ուսերի բացումով և ազդրերին ձեռքերի հպումով: Այս վարժությունը մշակվում է նախորդի հաջորդականությամբ: Ջոկի հրամանատարը բացատրում է սովորողներին, որ այս վարժությունը սկսելիս պետք է խոր շունչ քաշել եւ այդ դրությամբ պահել կրծքավանդակը, արտաշնչել և շարունակել շնչել բարձրացված կրծքով: Բարձրացնել կուրծքը, փորը ներս քաշել, իրանը մեկնել քիչ առաջ, սակայն կրունկները գետնից չեն անջատում, իսկ ուսերը բացում են: Ձեռքերն իջեցնում են ազդրերի կողքով այնպես, որ դաստակների ափերը կիսախուփ ծալած մատներով հպվեն ազդրերին: Որպեսզի ստուգվի իրանի առաջ մեկնման ճշտությունը, պետք է բարձրանալ թաթերի ծայրերին, ապա առանց իրանի թեքման անկյունը խախտելու՝ իջնել ամբողջ ներբանի վրա:

Այս նախավարժանքի ուսուցումը կատարվում է հետեւյալ հրամանով՝ «Կուրծքը բարձրացնել, փորը ներս քաշել, ուսերը բացել, մարմինը մեկնել առաջ, կատարիր ՍԵԿ. ընդունել սկզբնական կեցվածքը, կատարիր ԵՐԿՈՒ»: Վարժությունը կատարում են այնքան, մինչև յուրաքանչյուր սովորող զանազանի ճիշտ շարային կեցվածքի եւ մարմնի ազատ դիրքի տարբերությունը:

Նման տարբերությունները ցույց տալու համար պետք է մի տողանը շարել մյուսի դիմաց, ապա հրամայել. «Առաջին տողան, ԱՋԱՏ. երկրորդ տողան, կուրծքը ԲԱՐՁՐԱՑՆԵԼ»: Նույն հրամանը տրվում է առաջին տողանին, իսկ երկրորդին՝ ազատ:

Երկրորդ նախապատրաստական վարժանքի մշակման ընթացքում ջոկի հրամանատարը ցույց է տալիս սովորողներին շարային կեցվածքի ժամանակ գլխի ճիշտ դիրքը: Որպեսզի ստուգենք գլխի ճիշտ դրությունը, անհրաժեշտ է ընդունել շարային կեցվածք եւ, առանց գլուխը իջեցնելու, նայել ներքև՝ առաջ: Ճիշտ դիրքի ժամանակ ամենամոտիկ կետը, որը կտեսնի սովորողը, կլինի իրենից 2-3 քայլ առաջ, իսկ եթե նա տեսնում է 1 քայլ առաջ կամ տեսնում է սեփական կոշիկի ծայրերը, ուրեմն՝ գլխի դիրքը ճիշտ չէ: Ջոկի հրամանատարը սովորողների ուշադրությունը հրավիրում է այն բանին, որ ճիշտ շարային կեցվածքի ժամանակ պետք է կուրծքը միշտ կզակից մի քիչ առաջ պահել:

1 բ. «Շարվի՛ր», «Հավսա՛ր», «Զգա՛ստ», «Ազա՛տ», «Կարգի բերել», «Ցրվիր» հրամանների կատարումը

Մշակելով նախապատրաստական վարժանքները, (դասակի հրամանատարի) ցուցումով ջոկի հրամանատարը տա՝ է «Շարվի՛ր» հրամանը եւ անցնում շարային կեցվածքի տարր, միաձուլված մշակմանը: Վարժանքը կարելի է անցկացնել նախ զույգերով, ապա՝ ամբողջ ջոկի կազմով:

Զինղեկը դասակի հրամանատարի հետ միասին կարող է հերթով մոտենալ ջոկերին և ուսումնական հարցի մշակման ընթացքում օգնություն ցույց տալ ջոկերի հրամանատարներին: Դրա համար սովորողներին նա տալիս է հետևյալ հրամանները՝

- Աշակերտ Զաքարյան: - Ես եմ, - պատասխանում է սովորողը:

Քայլ առաջ, քայլով - Մա՛րշ:

- Լսո՛ւմ եմ, - պատասխանում է Զաքարյանը և կատարում հրամանը:

Ամբողջ ջոկի համար կարող է տալ. «Ջոկ, երկու քայլ առաջ, քայլով - Մարշ», հրամանը:

Այս հրամանը կատարելուց հետո հրամանատարը սովորողների շարային կեցվածքի ճշտությունն ստուգելու նպատակով կարող է տալ. «Ջոկ, ոտնաթաթերի ծայրերին - Բարձրացիր»: հրամանը:

Եթե շարային կեցվածքը ճիշտ է կատարվել, ապա ջոկի բոլ՝ աշակերտները հեշտությամբ, առանց առաջ թեքվելու, կատարում այս հրամանը: Շարային կեցվածքի ճշտությունը ստուգելու համար կարելի է նաեւ բարձրացնել կոշիկի քթերը: Դրա համար տրվում է,

«Ջոկ, ոտնաթաթերի ծայրերը Բարձրացնել, կատարիր - Մեկ» հրամանը: Նրանք ովքեր ճիշտ են ընդունել շաքային կեցվածքը, հրամանը չեն կարողանա կատարել:

Սովորողների յուրացնելով «Շարվիր» հրամանի կատարումը, անցնում են՝ «Հավասա՛ր», «Զգա՛ստ», «Ազա՛տ», «Կարգի՛ բերել», «Ցրվե՛լ» հրամանների մշակմանը:

Շարային կեցվածք՝

Քանի որ այս հարցն ուսումնասիրվել է թեմայի 2-րդ պարապմունքի ժամանակ, ուրեմն՝ այս պարապմունքի ընթացքում պետք է կատարելագործվի շարային կեցվածք ընդունելու հմտությունը: Սրանից հետևում է, որ վերջինիս մշակումը պետք է կատարվի «Շարվիր» հրամանը կատարելու միջոցով:

Շրջադարձեր տեղում՝

Զինղեկը դասակը շարում է երկտողան շարքով, ապա բացազատում է տողանները՝ մեկը մյուսից 3-4 քայլով: Տողաններից մեկը շրջադարձ է կատարում, իսկ զինղեկը կանգնում է

տողանների միջև, թևերից մեկում: Զինղեկը բացատրում է, որ միայնակ սովորողները տեղում շրջադարձերը կատարում են շարային պարապմունքներին, պետին մոտենալիս կամ հեռանալիս, ինչպես նաեւ շարք վերադառնալիս: Ստորաբաժանումները դրանք կատարում են ինչպես պարապմունքների, այնպես էլ շարումների եւ տեղաշարժերի ժամանակ:

Տեղում շրջադարձերը կատարվում են հետեւյալ հրամաններով՝ «Աջ-Դարձ», «Կես պտույտ աջ-Դարձ», «Ձախ-Դարձ», «Կես պտույտ ձախ-Դարձ», «Հետ-Դարձ»: Զինղեկը սովորողներին ցույց է տալիս հրամանն կատարումը միաձուլված: Այնուհետեւ ցուցադրում է շրջադարձ ղեցված կատարումը եւ բացատրում գործողություն կատարողական եւ նախնական հրամաններով, հետա 1/2), ձախ (շրջանի 1/4), կեսպտույտ ձախ (շրջանի 1/8) շրջ կատարվում են դեպի ձախ ձեռքի կողմը, ձախ կրնկի եւ ած թաթի վրա, աջը՝ աջ ձեռքի կողմը, աջ կրունկի եւ ձախ ոտնաթ վրա: Շրջադարձերը կատարվում են երկու հաշվարկով. ա». հաշվարկով շրջվել՝ պահելով իրանի կանոնավոր դիրքը եւ չծած ծնկները՝ մարմնի ծանրությունը տեղափոխել առջեւում դրված ուտ» վրա, երկրորդ հաշվարկով՝ կարճ ճանապարհով կպցնել մյուս ոտքը:

Ավարտելով տեղում շրջադարձերի ուսուցումը՝ զինղեկը ստուգում է այդ հնարքների յուրացումը, որից հետո հրամայում է ջոկի հրամանատարներին անցնել շրջադարձերի վարժումներին՝ ըստ ջոկերի: Տեղում շրջադարձերի ուսուցումը շարունակելու համար ջոկերի հրամանատարները շարում են իրենց ջոկերը միատողան շարքով՝ սովորողների միջև երկու քայլ հեռավորությամբ և շարունակում են վարժումները երկու հաշվարկով՝ 1

«Ըստ բաժանումների աջ դարձ, Կատարիր - Մեկ, կատարիր-Երկու»,

«Ըստ բաժանումների ձախդարձ, Կատարիր - Մեկ, կատարիր - Երկու հրամաններով: «Մեկ» կամ «Երկու» հաշվարկը սխալ, ոչ ստույգ կատարելու դեպքում տրվում է «Թողնել» հրամանը: Այսինքն՝ ընդունել այն դիրքը, որը եղել է մինչև կատարողական հրամանը: Ջոկի հրամանատարը հետևում է որ, մեկ հաշվին՝ սովորողները աջ կրունկի եւ ձախ ոտնաթաթի վրա աջ ձեռքի կողմը կտրուկ շրջվելով՝ պահպանեն իրանի դիրքը, ինչպես կեցվածքի ժամանակ, և մարմնի ծանրությունը առջևում դրված ոտքի վրա գցելով՝ ծնկները չծալեն: Առջևում դրված ոտնաթաթը ու հետեւում դրված ոտքի կրունկը պետք է այնպես բացված լինեն, որ շրջադարձն ավարտելուց հետո ոտնաթաթերը բացված լինեն թաթի լայնությամբ: Ձեռքերի դիրքը պետք է լինի՝ ինչպես շարային կեցվածքի ժամանակ:

Սովորելով ջոկի հետ բաժանումներով աջ շրջադարձը, ջոկի հրամանատարը զինղեկի հրահրամանով, անցնում է շրջադարձի ամբողջական ուսուցումը: Դրա համար նա հրամայում է «Ջոկ, աջ - Դարձ» և ուղեկցում է բարձրաձայն հաշվարկով՝ «Մեկ, Երկու:

Հնարքի ուսուցումը կարելի է շարունակել հենց սովորողի բարձրաձայն հաշվի ներքո:

Պետք է ուշադիր լինել, որպեսզի շրջադարձերը կատարվեն շարային կեցվածքի բոլոր կանոնների պահպանումով: Ավարտելով աջ շրջադարձի կատարման վարժումները՝ զինղեկի՝ հրահանգով ջոկի հրամանատարն անցնում է՝ «Կես - պտույտ ձախ - Դարձ» հրամանի ուսուցմանը: Մշակումն ընթանում է աջ շրջադարձի կատարման օրինակով: Զինղեկի կամ դասակի հրամանատարի հրահանգով ջոկերի հրամանատարներն անցնում են ձախ շրջադարձի մշակմանը: Շրջադարձի կատարման մշակումը անցնում է ճիշտ այնպես, ինչպես աջ շրջադարձի ժամանակ: Շրջադարձերի՝ «Աջ - Դարձ», «Կես պտույտ, աջ - Դարձ», «Կես պտույտ, ձախ - Դարձ» ուսումնասիրումը դասակի կազմում ավարտելուց հետո, պարապմունքի ղեկավարի կամ դասակի հրամանատարի հրահանգով, ջոկի հրամանատարի անցնում է «Հետ-Դարձ» շրջադարձի վարժմանը: Սկզբում դանդաղ տեմպով, ապա արագ՝ «Մեկ, Երկու» հաշվարկով, ցույց է տալիս հետադարձ, շրջադարձի կատարումը:

Տեղում դարձումների ուսուցման ընթացքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ աշակերտները հաճախ թույլ են տալիս հետեևյալ սխալները՝ իրանը շրջում են նախնական հրամանի ժամանակ, ծալում են ծնկները, դարձումների ժամանակ թափահարում են ձեռքերը, ներքև են թեքում գլուխը, իրանը հետ են թեքում եւ այլն:

Պարապմունքների ընթացքում հրամաններ տալով, ջոկի հրամանատարն ինքը պարտավոր է ուսանելի ձևով կատարել դրանք և դրանով իսկ օրինակ ծառայել աշակերտներին:

ՎԵՐՋԱԲԱՆ

Նախնական զինվորական պատրաստության դասի գլխավոր դեմքը զինղեկն է:

Նա է կազմակերպում, վերահսկում, ուղղումներ անում և ընդհանրացնում դասը: Դասի որակը պայմանավորվում է զինղեկի անձով և նրա կողմից իր պարտականություններին ստեղծագործական մոտեցումով, մանկավարժական գործընթացի բոլոր տարրերի փոխգործակցությամբ, բովանդակությամբ, միջոցներով և ուսուցման ձևերով, դասարանային եւ տնային աշխատանքների ռացիոնալ կառուցվածքով:

Եթե զինղեկը անձամբ չձգտի կատարելագործել սեփական տեսական և մեթոդական պատրաստականությունը, սեփական աշխատանքի և ուրիշի սխալների վերլուծումը, ապա նույնիսկ ամենալավ ձեռնարկները գործին չեն օգնի: Զինղեկը պետք է ձգտի իր գործի տերը դառնալ: Զինվորական շարքը գեղեցիկ և խիստ է: Ծառայության ընթացքում զինվորը ժամանակի մեծ մասն անց է կացնում շարքում: Այս պատճառով դպրոցում ուսուցանվող բանակային կյանքի իրողությունը չպետք է եզրափակվի այս կամ այն վարժաձևի կատարման անհրաժեշտության միայն տեսական դատողություններով:

Չպետք է սահմանափակվել վարժաձեւերը մի անգամ ճիշտ ցուցադրումով: Հարկավոր է պահանջել դրա կատարումը յուրաքանչյուր պարապմունքին:

Հավելված1. ***Դպրոցներում շարային պատրաստության պարապմունքների կազմակերպումը***

Առաջին հերթին անհրաժեշտ է ջոկերի և դասակների հրամանատարներին նախապատրաստել, որպես օգնականներ՝ պարապմունք անցկացնելու համար: Դա արվում է արտադասարանական ժամերի ընթացքում, որոնք զինղեկը պետք է նախատեսի իր աշխատանքային պլանում: Օգնականների հրահանգավորումը անց է կացվում հետեւյալ կարգով.

1. հրամանատարներին շարել միատողան շարքով,
2. ստուգել օգնականների արտաքին տեսքը,
3. հայտնել առաջիկա պարապմունքի թեմայի անվանումը և ուսումնական հարցերը, ինչպես նաև ուսումնական եւ դաստիարակչական նպատակները,
4. շարային վարժաձևը ցույց տալ ամբողջովին, ապա մաս-մաս և բացատրել ցույց տվածը,
5. տալ շարային վարժաձևը կատարելու հրամանը,
6. եթե կա անհրաժեշտություն, շարային վարժաձևը մասնատել տարրերի,
7.ցույց տալ վարժաձևն, ըստ տարրերի սովորելու մեթոդը,
8. սկսել հրամանատարների վարժանքները,
9. հրամանատարների կողմից շարային վարժաձեւի յուրացումից հետո պատմել նրանց առաջիկա պարապմունքի անցկացման կարգը և մեթոդը, ինչպես նաև ուշադրությունը հրավիրել այն բնորոշ սխալների վրա, որոնք շարային վարժաձեւը մշակելու ընթացքում կարող են թույլ տալ աշակերտները,

10. պարապմունքի ավարտին զինղեկը հայտնում է իր օգնականներին, թե ինչ և որտեղ կարդան, և ինչ անեն պարապմունքից առաջ:

Պարապմունքի օրը, դասակի հրամանատարի զեկույցը ընդունելուց, ողջույնից և արտաքին տեսքը զննելուց հետո, զինղեկը հայտարարում է դասական պարապմունքի թեման, նպատակները եւ ուսումնական հարցերը, որից հետո ղեկավարը մատնանշում է յուրաքանչյուր ջոկի պարապմունքի վայրը եւ այնուհետեւ հրամայում է. «Սկսել պարապմունքը»: Ընթացքում զինղեկը պարտավոր է հետևել աշակերտների գործողություններին, և եթե թույլ տրված սխալը ջոկի հրամանատարը չի նկատում, ապա ուղղել դա, իսկ անհրաժեշտության դեպքում ցուցաբերել օգնություն: Պարապմունքի վերջում ղեկավարը նախապատրաստական ցուցումներ է տալիս իր օգնականներին՝ առաջիկա պարապմունքի անցկացման համար:

Հավելված ***2.Շարային պատրաստության մակարդակի որոշումը և գնահատականը:***

Շարային պատրաստության ուրույնությունն այն է, որ տեսական պարապմունքները համեմատաբար քիչ են գործնական ցուցադրումներից եւ շարային վարժաձեւերի կատարումից: Փաստորեն սովորողները տեսությունը ուսումնասիրում են ընդհամենը 1 ժամ: Աշակերտների գիտելիքները կարելի է գնահատել հետևյալ հարցերին պատասխան ստանալով.

- Ի՞նչ բան է շարքը:

- Տվե՛ք թևի, ճակատի, տարածության, հեռավորության, ուղղապահի եւ վերջապահի սահմանումները:

- Թվարկե՛ք զինվորի պարտականությունները շարվելուց առաջ:

-Նշեք ջոկի շարքերը:

- Տվե՛ք շարքի լայնության, շարքի խորության, երկտողան շարքի, կարգի, շարասյան, ծավալուն շարքի եւ երթային շարքի սահմանումները:

- Թվարկե՛ք միատողան կամ երկտողան շարք կանգնելու առանձնահատկությունները: - Նշեք ջոկի երթային շարքերը:

Շարային վարժաձեւերի կատարման գնահատականը՝

Գործնական ուսուցման տեսակետից շարային պատրաստության գլխավոր խնդիրն է՝ աշակերտների մեջ սերմանել նախնական, սկզբնական հմտություններ շարային վարժաձեւեր կատարելիս: Հետեւաբար, վարժաձեւեր կատարելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ վարժաձեւը կատարվի ճշտորեն՝ ըստ կանոնադրության պահանջների, առանց սխալների, իսկ ինքնաբերական կատարման կհասցվի ապագա ծառառության ընթացքում: Բացառությունը միայն շարային կեցվածքին է վերաբերում, որը ամեն դեպքում պետք է անթերի կատարվի: Աշակերտների շարային պատրաստության մակարդակը ցույց է տալիս, որ աշակերտների հմտությունները միշտ էլ ցածր են զինծառայողների հմտությունների մակարդակից, քանի որ պայմանները և ժամանակը թույլ չեն տալիս կատարելագործվելու: Այդ պատճառով աշակերտի կողմից կատարված յուրաքանչյուր վարժաձև գնահատվում է հետևյալ կերպ.

- «Գերազանց», եթե վարժաձևը կատարվում է շարային կանոնադրության համաձայն, վստահ և առանց լարվելու:

- «Լավ», եթե այն կատարվել է առանց ավելորդ լարվածության, սակայն թույլ է տրվել մեկ սխալ:

- «Վատ», եթե վարժաձևի կատարման ժամանակ թույլ է տրվել երկուսից ավել սխալներ:

- «Շատ վատ», եթե վարժաձևը չի կատարվել:

4. ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԲՆՈՐՈՇ ՍԽԱԼՆԵՐԸ

Աշակերտի շարային պատրաստության մակարդակը ճիշտ գնահատելու համար պետք է ստուգել ինը վարժաձև.

1.Շարքից դուրս գալը, 2. Շարային կեցվածք, 3. Դարձումներ տեղում, 4. Շարային քայլ, 5. Դարձումների շարժման ժամանակ, 6. Զինվորական ողջույնը տեղում և շարժման ժամանակ, 7. Պետին մոտենալը և հեռանալը, 8. Շարք վերադառնալը, 9. Զենքով վարժաձևեր տեղում։

- **ՇԱՐՔԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ** — Շարքից դուրս գալը կատարվում է ոչ շարային քայլով։ Շարքից դուրս եկողը դեմքով չի շրջվել դեպի շարքը
- **ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔ** — Հագուստը մաքուր եւ արդուկված է։ Կան պոկված կոճակներ։ Կոշիկները մաքրված չեն, մազերը հարդարված չեն։
- **ՇԱՐԱՅԻՆ ԿԵՑՎԱԾՔ** — Ոտնաթաթերի բացվածքը ճակատի գծով չէ, և լայնությունը թաթի լայնության չափ չէ։ Կուրծքը բավական բարձրացրած չէ, փորը հավաքած չէ, ափերը ետ են դարձված, իրանը առաջ չի մղված։
- **ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՏԵՂՈՒՄ** — Դարձումների ժամանակ ձեռքերը շարժվում են, դարձումը ամբողջ իրանով չի կատարվում։ Ետևի ոտքը կարճ ճանապարհով չի մոտեցվում, դարձումից հետո ոտնաթաթերի բացվածքը շատ լայն է, կամ մի գծի վրա չեն, գլուխը թեքված է, շարային կեցվածքը պահպանված չէ։
- **ՇԱՐԱՅԻՆ ՔԱՅԼ** — Իրանը առաջ տրված չէ, ծնկները ծալվում են, ոտքը գետնից 15սմ քիչ է բարձրանում, չի պահպանվում քայլի տեմպը և չափը, ձեռքերի շարժումը կատարվում է ոչ սահմանված բարձրությամբ, ձեռքերի և ոտքերի շարժումը ներդաշնակ չէ։
- **ԴԱՐՁՈՒՄՆԵՐ ՇԱՐԺՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ** — Ետդարձ կատարելիս աջ ոտքը ձախ չի տարվում, իսկ քայլը շատ լայն է արվում, բացակայում է իրանի կայունությունը, գլուխը կախ է, բացակայում է ոտքերի և ձեռքերի ներդաշնակ շարժումը։
- **ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՈՂՋՅՈՒՆԸ ՏԵՂՈՒՄ ԵՎ ՇԱՐԺՄԱՆ** — Ողջույնը տրում է ոչ 5-6 քայլ առաջ, ոտքը գետին դնելը և գլխի դարձումը միաժամանակ չի արվել, աջ ձեռքի արմունկը ուսի հետ մի գծի վրա չէ։

ՀԱՄԱՆԱԿ	
➢ ՊԵՏԻՆ ՄՈՏԵՆԱԼՆ ՈՒ ՀԵՌԱՆԱԼԸ	Մոտենալիս ձեռքը գլխարկին և ոտքը գետնին նույն պահին չեն դրվում, միջնամատը չի դիպչում գլխարկի ներքևի եզրին, հեռանալիս ձեռքը և ոտքերը անջատ են գործում, երթային քայլի շուտ է անցնում:
➢ ՇԱՐՔ ՎԵՐԱԴԱՐՁԸ	Շարք վերադառնալիս աշակերտը սխալ է զբաղեցնում տեղը, ժամանակից շուտ է անցնում երթային քայլի:
➢ ՇԱՐԱՅԻՆ ՎԱՐԺԱՁԵՎԵՐ ՁԵՆՔՈՎ, ՏԵՂՈՒՄ	Վարժաձևերի կատարման ընթացքում գլխի, իրանի ուժգին տատանումներ: Վարժաձևերը կատարելիս ձեռքերի ոչ հստակ աշխատանք:

Գործնական համատեքստ

Ինչպե՞ս եմ կազմակերպել աշխատանքները:

Դիտարկումները կատարել եմ դասի ընթացքում՝ հետևելով աշակերտների վարքագծին, վերլուծելով աշակերտների ինքնագնահատման հարցաթերթիկները: Վարել եմ անհատական զրույցներ, վերլուծել դասերի ամփոփման փուլի տվյալները, համագործակցել եմ դասղեկների, դասավանդող այլ ուսուցիչների հետ:

Կազմակերպել եմ ներառված դիտարկում, որովհետև չեմ ցանկացել, որ որևէ հանգամանք խանգարի ազատ, անկաշկանդ մթնոլորտին: Հետազոտությունը կազմակերպել եմ Վարդանիձորի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանցիների շրջանում:

Նախընտրեցի դասերս կառուցել **ակտիվ** ուսուցման, **պրոբլեմային** ուսուցման, **համագործակցային** ուսուցման տեխնոլոգիաների համադրմամբ:

Մակերեսային հասկացածը մնայուն չէ: Որքան շատ գիտելիք ունենք , այնքան հեշտ ու շատ կարող ենք սովորել: Դասերս կառուցելիս ինձ համար առաջնային խնդիր եմ համարում նյութը մատուցել այնպես, որ թեմայի դժվարամարս կամ շփոթեցնող հատվածները դառնան մատչելի, ընկալելի: Երբ աշակերտը հաջողություն է գրանցում, ոգևորվում է, ձգտում է առաջ գնալ: Մյուս կողմից շեշտում եմ նյութի փոխկապակցվածությունը այլ թեմաների հետ, կամ փորձում եմ ցույց տալ այն կենսական հմտությունը, որը կզարգացնի դասին և կկիրառի կյանքում: Աշակերտին դուր է գալիս այն համոզմունքը, որ ինքը կարճ ժամանակում շատ բան յուրացրեց: Ոգևորվում են՝ ընկալելով սովորածի կենսական անհրաժեշտությունը:

Ակտիվ ներգրավելով աշակերտներին դասի մատուցման մեջ՝ առաջարկում եմ օրինակներ, առաջադրանքներ, հարցեր և ամրապնդում իմացածը համատեղ քննարկումով: Ապա տալիս եմ անհատական աշխատանք/ սկզբում փոքրաձավալ/, հարկ եղած դեպքում օգնում, ձգտում համոզմունք ամրապնդել, որ կարող է կատարել:

Ժամանակին տրված հասանելի հետադարձ կապը ևս օգնում է բարձրացնել մոտիվացիան:

Աշխատեցի պահպանել պարզից բարդ մատուցման սկզբունքը, խրախուսում էի ակտիվությունը: Աշակերտները չեն վախենում սխալվել, որովհետև սխալ պատասխանի վերլուծությամբ ևս կարելի է խորը գիտելիք ստանալ:

Հատկապես շատ արդյունավետ եղան ինքնագնահատման հարցաթերթերը, զրույցները:

Դրսևորեցի տարբերակված մոտեցում: Նյութը բաժանեցի հատվածների և աշխատանքներ հանձնարարեցի՝ հաշվի առնելով աշակերտների կարողությունները: Մթնոլորտն անկաշկանդ էր, աշխատանքը՝ հաճելի: Նրանցից շատերը հաճույքով են կատարում հանձնարարությունները: Ուրախությամբ նշում են , որ ոգևորվում են նաև դասընկերների ձեռքբերումներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

- Նպատակայինն աշխատելը և փոքր ձեռքբերումները նշելը կօգնեն մեզ մոտիվացիան պահպանել:
- Կայուն առաջընթացը կարող է հանգեցնել նոր և ավելի բարդ խնդիրներ դնելու ցանկության:
- Հաջողությունից օգտվելիս մեր մոտիվացիան կաճի, և մենք կարող ենք ոչ միայն հասնել մեր նպատակներին, այլև գերազանցել դրանք:
- Փոքր առաջադրանքները կարող են նաև փոքր-ինչ փոխվել, երբ ավարտում ենք հիմնական նպատակին տանող քայլերը:

Աշակերտների մտածելակերպում և վարքագծում նկատվող դրական տեղաշարժերը թույլ են տալիս պնդելու, որ դասավանդման ժամանակակից մեթոդներն ու մոտեցումները արդյունավետ կիրառելիս կխթանվի մոտիվացիան:

Ճիշտ պլանավորումը, աշակերտների տարիքային և հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրումը, դրական օրինակների մատնանշումը, ժամանակի կառավարումը, տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային ներդնումը, ավանդական և ժամանակակից մեթոդների պատճառաբանված կիրառումը կնպաստեն ինչպես մոտիվացիայի բարձրացմանը, այնպես էլ ուսման որակի և առաջադիմության բարելավմանը: Իսկ այս ամենն անելու համար մեծ **ՄԵՐ, ՆՎԻՐՈՒՄ** և **ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ** է պահանջվում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ ՊՆ,Հայրենիք և ծառայություն ուսումնական ձեռնարկ, Երևան,2001թ.։
2. Հ. Ստեփանյան, Վ. Օհանյան, ՆԶՊ դասի անցկացման կարգը մեթոդական ձեռնարկ,Երևան,2004թ.։
3. Վ. Ղանդիլյան, Վ. Սարգսյան, Հանրակրթական դպրոցի զինղեկի ձեռնարկ-ուղեցույց, Եչևան,2010թ.։
4. Վ. Օհանյան, ՆԶ պատրաստություն հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2003թ.։
5. Վ. Օհանյան, Վ. Առաքելյան,ՆԶՊ-ի ուսուցչի ձեռնարկ, Երևան,2014թ.։